

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Անգլերենի դերը սովորողի որպես ապագա անձի զարգացման  
գործում

Մարզ՝ Արագածոտնի մարզ

Ուսումնական հաստատություն՝ Սադունցի հիմնական դպրոց

Առարկա՝ Անգլերեն լեզու

Հեղինակ՝ Զանոյան Անուշ

Անգլերենի դերը սովորողի որպես ապագա անձի զարգացման գործում  
Բովանդակություն

Ներածություն .....	3
1. Անգլերեն լեզվի դերը և նշանակությունը .....	5
2. Անգլերեն լեզվի դասավանդման մեթոդների դերը անձի զարգացման գործում .....	9
Եզրակացություն .....	19
Օգտագործված գրականության ցանկ .....	21

## **Ներածություն**

### **Թեմայի արդիականությունը:**

Անգլերենի ուսուցման հանրակրթական դասընթացում ներկայումս տեղի են ունենում նպատակների հիմնային փոփոխություններ: Դա բացատրվում է ոչ միայն մասնագիտական ուսուցման, այլև խաղային մակարդակում անգլերենի ուսուցման ծրագրերի արմատական փոփոխությամբ: Ինչպես հայտնի է, օտար լեզվի դասավանդման մեթոդիկայի խորհրդային ավանդույթի շրջանակներում առանձնակի կարևորվում էին հիմնականում գործնական, մշակութային և կրթական նպատակները:

Սակայն արդեն 1990-ական թվականներին օտար լեզվի դասավանդման մեթոդի - կայի առաջնային նպատակ է սկսում դառնալ հաղորդակցական իրազեկության կամ անձի կարողության ձևավորումը: Արդի փուլում բազային մակարդակում օտար լեզվի դասավանդման նպատակները ներառում են օտարալեզու հաղորդակցական իրազեկության խթանում և աշակերտների զարգացումն ու դաստիարակությունը օտար լեզվի միջոցներով:

Մեթոդաբանները մեծ ուշադրություն են դարձնում հատկապես օտար լեզվի միջոցով աշակերտների քննադատական մտածողության զարգացման, աշխարհայացքի, արժեքային համակարգի ձևավորման, ընդհանուր դաստիարակության և կրթության խնդիրների վրա: Անգլերենի խորացված ուսուցման դասընթացն ավելի մեծ հնարավորություններ է ընձեռում օտար լեզուն սոցիալականացման, դաստիարակության ու կրթության միջոցի, և ոչ թե նպատակի, վերածելու համար: Բազային մակարդակում

օտար լեզվի ուսուցումը հետապնդում է ոչ միայն կրթական, ուսումնական, այլև դաստիարակչական նպատակներ:

Կարելի է փաստել, որ անգլերեն լեզվի մասնագիտական նպատակներով դասավանդումը վերջին տասնամյակներին լուրջ ուշադրության է արժանանում և ստանում առանձնահատուկ կարևորություն: Եվ դա պատահական չէր կարող

լինել գիտության և տեխնիկայի այսպիսի առաջընթացի ժամանակաշրջանում, երբ աշխարհը գտնվում է համակարգչի հզոր ցանցերի տիրապետության տակ:

Առանց անգլերենի, որն աշխարհագրորեն ամենատարածված լեզուն է աշխարհում, հնարավոր չէ պատկերացնել միջազգային հաղորդակցությունը, առևտրական, գործնական, քաղաքական ու մշակութային հարաբերությունները, առաջադիմական գիտությունն ու տեխնոլոգիան: Եվ հատկապես այս բնագավառներում տեղի ունեցող առաջընթացի հետ է կապված անգլերեն լեզվի մասնագիտական նպատակներով դասավանդման դերի աճն ու նշանակությունը:

Ինչպես հայտնի է, լեզվի հիմնական դերն այն է, որ այն ստեղծված է և զարգանում է ելնելով մարդկանց հաղորդակցվելու պահանջներից և այն հարկավոր է կյանքի բոլոր բնագավառներում: Այստեղից էլ բխում է օտար լեզվի իմացության անհրաժեշտությունը, առավել ևս այնպիսի մի լեզվի, որն երկրագնդի վրա մեծ թվով մարդիկ են տիրապետում:

Լեզվի դերը հատկապես էական է գիտության մեջ:

#### **Թեմայի նպատակը և խնդիրները:**

Թեմայի նպատակն է ուսումնասիրել՝ անգլերեն լեզվի դերը որպես սովորողի անձի զարգացման գործընթաց:

Խնդիրներն են՝

- ուսումնասիրել՝ անգլերեն լեզվի դերը և նշանակությունը,
- ուսումնասիրել՝ դասավանդման մեթոդների դերը անձի զարգացման գործում:

#### **Հետազոտական աշխատանքի կառուցվածքը:**

Հետազոտական աշխատանքը կազմված է՝ ներածական մասից, երկու բաժիններից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

## 1. Անգլերեն լեզվի դերը և նշանակությունը

Գիտության զարգացումը անհնար է պատկերացնել տվյալ բնագավառում առանց արդեն ձեռք բերածը հետագա ուսումնասիրողներին հաղորդելու: Գիտական ուսումնասիրությունների արդյունքների ոչ ճիշտ շարադրանքը կարող է պատճառ դառնալ հեղինակի և ընթերցողի միջև «չինական պարսպի» առաջացմանը: Ուստի բնական է, որ անգլերենի՝ որպես օտար լեզվի ուսուցումը սկսվում է դպրոցական (այժմ՝ հաճախ նաև նախադպրոցական) տարիքում, ապա շարունակվում է չափահաս դառնալուց հետո նույնպես:

Ի տարբերություն ընդհանուր անգլերենի, որն ուսուցանվում է դպրոցական տարիքում, անգլերենը մասնագիտական նպատակներով ունի մասնագիտական ուղղվածություն և հիմնականում նպատակաուղղված է չափահաս սովորողին:

Արդեն չափահաս դարձած սովորողին, ուսանողին կամ գիտաշխատողին է հարկավոր անգլերենը մասնագիտական նպատակների համար, որպեսզի նա կարողանա բարձրացնել իր կրթական մակարդակը կամ խորացնի իր մասնագիտական գիտելիքները՝ զերծ մնալով սահմանափակությունից, և բարձրացնի հասարակության մեջ կամ աշխատանքում իր ունեցած դերը: Միայն անգլերենի լավ իմացությամբ է պայմանավորված նրա անմիջական շփումն առաջատար գիտնականների ու գիտահետազոտական ինստիտուտների հետ, ինչպես նաև գիտական կոնֆերանսներին մասնակցություն ցուցաբերելը, տարբեր գիտական հոդվածների ու առանձին բնագավառների վերջին նվաճումներին իրազեկ դառնալն առանց միջնորդ լեզվի: Վերոհիշյալից ակնհայտ է, որ անգլերեն լեզվի մասնագիտական նպատակներով դասավանդումը, ի տարբերություն ընդհանուր անգլերենի, հիմնականում նպատակաուղղված է բուհական ուսանողներին և երիտասարդ գիտնականներին: Ըստ ուսուցման մակարդակների այն կարելի է բաժանել երեք էտապների՝ սկզբնական, միջին, խորացված:

Սկզբնական էտապը վերաբերում է սկսնակներին՝ այն ուսանողներին կամ երիտասարդ գիտնականներին, որոնք միջնակարգ կրթություն ստանալիս բավարար

չափով չեն յուրացրել անգլերեն լեզվի դասընթացը կամ տիրապետում են որևէ այլ օտար լեզվի և այժմ ցանկանում են ուսումնասիրել անգլերեն՝ մասնագիտական նպատակներով: Առաջին՝ սկզբնական մակարդակում լեզվի ուսուցումն անհրաժեշտ է սկսել լեզվական տարրական գիտելիքներ հաղորդելուց<sup>1</sup>:

Օրինակ տառերի, տառակապակցությանների, հնչյունաբանական որոշ կանոնների, ընդհանուր բառապաշարի, ընթերցելու, հարցեր կազմելու ունակությունների ուսուցանում: Այս էտապում սկսնակների համար դեռևս դժվար է տեքստերի վրա ինքնուրույն աշխատելը: Այս առումով անհրաժեշտ է առավել ուշադրություն դարձնել քերականության արմատավորմանը, որը հետագայում հզոր հիմք է հանդիսանալու լեզվական գիտելիքների զարգացման համար:

Միջին էտապում ուսանողը նոր ուսուցանվող լեզվից արդեն ունենալով նախնական գիտելիքներ, ընդհանուր պատկերացում է կազմում այդ լեզվի մասին, կարողանում է միջին բարդության որևէ տեքստ կարդալ ու հասկանալ և ի վիճակի է բանավոր զրույց վարել առօրյա թեմաների շուրջ:

Ինչ վերաբերում է անգլերեն լեզվի մասնագիտական նպատակներով դասավանդմանը, ապա առավել նպատակահարմար է այն սկսել միջին էտապում, սովորողի ուշադրությանը բևեռելով այնպիսի քերականական և լեզվական կառուցվածքների վրա, որոնց գործածությունը գիտական տեքստերում նկատվում է առավել հաճախ, և առանց որոնց իմացության մասնագիտական տեքստերի ըմբռնումը բավական դժվարանում է: Այսպես, օրինակ, քերականությունից պետք է առանձնապես ուշադրություն դարձնել ժամանակաձևերի, կրավորական սեռի, հոդի, դերբայական դարձվածների ուսուցմանը: Եվ, քանի որ անգլերենում ժամանակաձևերը որոշակի բարդություն են իրենցից ներկայացնում, ապա դրանց ուսուցումը պետք է տարվի շարունակաբար և խիստ հետևողականորեն:

Տեխնիկական տեքստերում Passive Voice-ի հաճախակի գործածությունը պահանջում է այդ կառուցվածքի ճիշտ և պարզորոշ ըմբռնում, քանի որ դրա

---

<sup>1</sup> Տե'ս, Գ. Բոգովա., Методика обучения английскому языку. Учебное пособие для пед. ин-тов и фак. иностранных языков, Л.: 1975, էջ 34-39:

մոտավոր, ոչ կոնկրետ ընկալումը կարող է տվյալ բնագավառում մասնագիտական հասկացությունների սխալ ընկալման պատճառ դառնալ:

Ինչպես արդեն վերը նշվեց, հողերի, որոշ դերբայական դարձվածների, ինչպես նաև քերականական այլ կարգերի ուսուցումը նույնպես կարևոր է անգլերենը մասնագիտական նպատակներով դասավանդելիս:

Եվ նկատի ունենալով տեխնիկական գիտություններին հետևող լսարանի լեզվամտածողության առանձնահատկությունները, առավել նպատակահարմար է քերականական նյութը ներկայացնել աղյուսակների կամ լեզվական կառույցների տեսքով, որոնք կարելի է զետեղել գրքի յուրաքանչյուր դասաբաժնի սկզբում կամ դասագրքի վերջին մասում՝ հավելվածի տեսքով:

Նշված քերականական գիտելիքներից և ընդհանուր բառապաշարից բացի, որոնց իմացությունը հնարավոր է դարձնում միջին դժվարության տեքստերի ընկալումը և տվյալ թեմայի շուրջ առաջադրված հարցերին պատասխանելը, խիստ անհրաժեշտ է դառնում այնպիսի բառերի և դարձվածների ուսուցումը, որոնց միջոցով հնարավոր կլինի ճիշտ արտահայտել տարբեր բնագավառների բնորոշ հասկացություններ և եզրահանգումներ: Այս առումով խիստ կարևոր է գիտական տերմինների դերը:

Տերմինների, դարձվածների, գիտական հասկացությունների ուսուցմամբ էլ պայմանավորված է անգլերեն լեզվի մասնագիտական նպատակներով ուսուցման խորացված էտապը: Քանի որ անգլերեն լեզուն հագեցած է այնպիսի բառերով, որոնց բնորոշ է հոմանիշների բազմազանությունը, ինչպես նաև այնպիսի բառերի և արտահայտությունների առատությունը, որոնք հաճախ համարժեք են միմյանց և կարող են օգտագործվել մեկը մյուսի փոխարեն, լեզուն խորապես ուսումնասիրողի կողմից պահանջվում են թե լեզվական, թե մասնագիտական լայն գիտելիքներ, հարուստ բառապաշար, ինչու չէ նաև լեզվական նուրբ հոտառություն տվյալ կոնտեքստում բառի ճիշտ և տեղին ընտրության կատարելու համար:

Այսպիսով, ուսուցման խորացված էտապը բնորոշվում է լեզուն ուսումնասիրողի բառապաշարի գիտական տերմիններով և հասկացություններով համալրմամբ, ինչպես նաև նրա բանավոր խոսքի ունակությունների զարգացմամբ, որին կարող

է մեծ չափով նպաստել մասնագիտական թեմաներով բանավեճերի կոնֆերանս - ների կազմակերպումը, ինչպես նաև լեզվական միջավայրի ստեղծումը, որը հնարավորություն կտա լեզուն առավել հաճախ և ազատ օգտագործել: Այստեղ հիմնականում նկատի է առնվում սովորողի պատմելու ունակության զարգացումը, ինչպես նաև տվյալ բնագավառին բնորոշ երևույթների մատչելի ներկայացումը:

Այս առումով օտար լեզվի դասավանդման պրոցեսում շատ բան է կախված նաև գիտական տեքստերի ընտրությունից<sup>2</sup>:

Անհրաժեշտ է, որ ընտրված գիտական տեքստերը վերաբերեն տվյալ բնագավառին կամ, առնվազն որոշակի առնչություն ունենան նշված բնագավառի հետ: Կարևոր է նաև, որ ընտրված գիտական տեքստերը կազմված լինեն հնարավորին չափ պարզ և մատչելի, գերծ լինեն ավելորդ բառակապակցություններից, դարձվածներից և բարդ քերականական կառույցներից, որոնք տվյալ պարագայում կծանրաբեռնեն սովորողին և կշեղեն նրա ուշադրությունը հիմնական իմացությունից:

Գիտական տեքստերի ճիշտ ընտրությունը մեծապես կնպաստի այն երևույթ - ների և մասնագիտական հասկացությունների ընկալմանը, որոնք շարադրված են ընտրված հատվածում: Ցանկալի է նաև, որ երևույթները կամ հասկացությունները ներկայացված լինեն մատչելի նախադասություններով: Սակայն սա բոլորովին չի նշանակում, որ գիտական տեքստերում տրամաբանորեն և քերականորեն կառուցված բարդ նախադասություններ օգտագործելուց պետք է խուսափել:

Նման նախադասությունների առկայությունը գիտական տեքստերում անխուսափելի է և նույնիսկ անհրաժեշտ օտար լեզուն մասնագիտական նպատակներով դասավանդելիս: Հարկ է նշել նաև, որ այս կամ այն երևույթը նկարագրելիս հարկավոր է խիստ ուշադիր լինել բառերի, արտահայտությունների ընտրության հարցում, քանի որ, ինչպես հայտնի է, գիտական խոսքը պետք է լինի դիպուկ և նպատակային:

---

<sup>2</sup> St'u, П. Сысоев., Обучение иностранному языку на старшей ступени общего среднего (полного) образования. Профильный уровень, "Иностранные языки в школе", № 2, 2006, էջ 7-8:

## 2. Անգլերեն լեզվի դասավանդման մեթոդների դերը անձի զարգացման գործում

Լեզվի դասավանդման պատմության ընթացքում դասավանդողները կիրառել են տարբեր մեթոդներ, պարբերաբար անցում կատարել նորագույն մեթոդների, իսկ ժամանակն ու նոր սերունդների պահանջները հղկել են բառապաշարի և լեզվական կանոնների մատուցման ձևերը՝ դրանք զուգադրելով ժամանակակից տեխնիկայի և սարքավորումների առաջարկած հնարավորությունների հետ: Նորովի մատուցելու և դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու ձգտումը լեզուն ուսուցա - նողներին դրդել է նոր սկզբունքներ և մարտավարություններ մշակել, որոնցից հաջողվածները լայն տարածում և կիրառություն են գտել, լրացվել, վերամշակ - վել և վերածվել մեթոդների:

Սույն աշխատանքի նպատակն է ներկայացնել մեր օրերում արդի համար - վող դասավանդման որոշ մեթոդներ և մեկնաբանել դրանց բովանդակությունը, նպատակահարմարությունը, առանձնահատկություններն ու նրբությունները, ինչպես նաև դերը և ազդեցությունը անձի զարգացման գործընթացում:

Մ. Դորշը տարբերակում է լեզվի ձեռքբերում և լեզվի սովորում հասկացությունները: Նա կարծում է, որ լեզվի ձեռքբերումը չգիտակցված գործընթաց է, որի հիմքում անգիր արված բառերն ու արտահայտություններն են, լսողական և տեսողական ընկալումը, ինչպես մայրենի լեզվի դեպքում է:

Լեզվի սովորումը ենթադրում է յուրաքանչյուր բառի, արտահայտության, մտքի և խոսքի գիտակցված սովորում, կառուցում և շարադրում<sup>3</sup>:

Լեզուն սովորողը ուսուցումը սկսում է լեզվական կանոնների և բառապաշարի յուրացումից, դրանք դնում գործածության մեջ՝ որոշակի արդյունքի հասնելու համար: Սակայն, կարծում ենք, լեզվի ձեռքբերումն ու լեզվի սովորումը փոխկապակց - ված գործընթացներ են: Ուսուցման որոշակի փուլերում կամ ողջ ընթացքում

<sup>3</sup> Տե՛ս, Dorsch M., Second Language Acquisition vs. Second Language Learning. Germany: Grin Verlag 2011, էջ 2:

/հաճախ ֆիլմերից, երգերից/ սովորողի հիշողության մեջ պատկերվում և պահպանվում են բառակապակցություններ, արտահայտություններ և լեզվական կառույցներ, որոնք լեզվական կանոններից «դուրս են», չեն համապատասխանում գրական լեզվի քերականական սահմանումներին, սակայն առօրյա խոսակցական լեզվում լայն տարածում ու կենցաղային գործածություն ունեն, ինչի շնորհիվ էլ լեզվօգտագործման այսպիսի ձևերը ինքնաբերաբար տեղ են գտնում օտար լեզու սովորողի բառապաշարում և գիտակցության մեջ:

Բացի այդ, յուրաքանչյուր սովորող լեզվի յուրացման և գործածման որոշակի փուլում նկատում է, որ իր գիտելիքի որոշակի մասը «մեխանիկորեն» է ձեռք բերել:

Դասավանդելն ու սովորելը պետք է հավասարապես փոխկապակցված լինեն, միայն այդ դեպքում սովորելը արդյունավետ դասավանդման արդյունք կհամարվի<sup>4</sup>:

Միայն դասավանդողի հետևողականության և սովորողի ջանասիրության դեպքում են լավագույն արդյունքներ գրանցվում: Անշուշտ, չի կարելի հերքել դարերով եկած այն կարծրատիպը, որ նոր լեզու սովորող յուրաքանչյուր անձ բառապաշարի և լեզվական կանոնների մատուցման անհատական մոտեցում է պահանջում, ուստի չի կարող մեկ անձի դեպքում հաջողություն արձանագրած մարտավարությունը համարվել բացարձակ արդյունավետ:

Բացի այդ, կարևորվում են նաև լեզվական ուսուցման նպատակը, ժամկետները, սովորողի ընդունակությունները և այլն:

Սա է պատճառը, որ մանկավարժության մեջ ուսուցման մարտավարությունները բազմաթիվ են, իսկ արդյունավետ դասավանդման մեթոդները մի քանիսը:

Մ.Չ. Միդլիքուին կարևորում է դասավանդման ոճերի դասակարգումը /teaching styles/, որոնցով էլ պայմանավորված է մեթոդի ընտրությունը՝

**1. Կարգապահական ոճ** /discipline-centred/, որտեղ կարևորությունը տրվում է մշակված ծրագրից և ժամանակացույցից չշեղվելուն և տվյալ դասընթացի նյութին համապատասխան աշխատելուն: Այս դեպքում նպատակը յուրաքանչյուր դասընթացի պլանավորումն ու դրա ամբողջությամբ իրականացումն է:

<sup>4</sup> Տե՛ս, Siddiqui M.H., Techniques of Teaching Strategies. New Delhi: APH Publishing 2009, էջ 1:

2. «Դասախոսակենտրոն» ոճ /instructor-centred/ առանցքային դերում դասավանդողն է, այսինքն դասընթացի վարման հիմնական դերը դասավանդողին է, նա սովորողի հետ աշխատում է նախապես իր կողմից պատրաստած նյութերով՝ թարգմանված բառապաշար, հոմանիշներ, հականիշներ, դրանց գործածությունը արտահայտությունների և նախադասությունների մեջ և այլն:

3. Առանցքային դերում սովորողն է՝ «ուսանողակենտրոն» ոճ /student-centred/, նա է կատարում երկրորդ կետում նշվող բոլոր առաջադրանքները, իսկ դասավանդողը ուղղորդում է և բացատրում նոր նյութը<sup>5</sup>: Սովորողի կողմից լեզուն առավել արդյունավետ յուրացնելու ոճով է պայմանավորված մեթոդի ընտրությունը: Ոմանք ավելի լավ են ըմբռնում նյութի հետ շատ և պարբերաբար աշխատելու դեպքում և նախընտրում են «ուսանողակենտրոն» ոճով աշխատել՝ իրենց վրա վերցնելով նյութի հետ աշխատելու ծանրությունը, ոմանք էլ նյութը հեշտությամբ մտապահում են՝ տեսողական հիշողությամբ «որսավով լեզվական նշաններն ու պատկերները» և դասավանդողից պահանջում են տրամադրել միայն մշակված նյութեր:

Ոճերին համարժեք մեթոդ ընտրելիս կարևոր է նաև դասընթացի տեղայնությունը: Եթե ուսուցումը խմբակային, դասարանային կամ լսարանային պայմաններում է, դժվար է պլանավորած նյութին ամբողջությամբ կամ ամենայն մանրամասնությամբ անդրադառնալը, քանի որ յուրաքանչյուր անհատ տարբեր կրթական ունակու - թյուններ, հիշողություն և գիտելիքների բազա ունի, բացի այդ պետք է հաշվի առնել նաև նյութի բարդությունը:

Մեկից ավելի սովորողների հետ աշխատելիս հաճախ անհրաժեշտություն է առաջանում մեկ դասաժամի ընթացքում անցում կատարել տարբեր ոճերի, այսինքն՝ աշխատել տարբեր դասավանդման մեթոդների համակցմամբ:

Իսկ ի՞նչ է մեթոդը: Դասավանդողի համար մեթոդը լեզվական նյութի մատուցման և դասավանդման գործընթացի կազմակերպման, իսկ սովորողի համար՝ մատուցված

---

<sup>5</sup> Տե՛ս, Siddiqui M.H., Techniques of Teaching Strategies. New Delhi: APH Publishing 2009, էջ 2-4:

նյութի առավելագույնս արդյունավետ ընկալման, յուրացման և վերարտադրման ձևն է:

Յուրաքանչյուր մեթոդի կիրառման դեպքում առանցքային կարևորություն ունի ուսուցման ժամանակացույցի մեջ նյութի ճիշտ բաշխումը:

Թե՛ դասավանդողը, թե՛ սովորողը նախապես պետք է համաձայնության գան սվյալ դասընթացից ակնկալվող արդյունքների շուրջ: Դասավանդողը պետք է տեղեկացնի սովորողին, թե սվյալ ժամանակահատվածում, ինչպիսին կարող է լինել այն առավելագույն արդյունքը, որը հնարավոր է գրանցել, և երկուստեք պետք է փոխադարձաբար հետևողական լինեն գիտելիք տալու և ստանալու հարցում:

Օտար լեզուների ուսուցման համար լեզվաբանության մեջ առկա մեթոդներից առավել հայտնի և ամենաշատ կիրառվող մեթոդները հետևյալներն են.

1. ակտիվ ուսուցման մեթոդ /active learning method/,
2. երկլեզու մեթոդ /bilingual method/,
3. ուղիղ մեթոդ /direct method/,
4. հաղորդակցական մեթոդ /communicative method/,
5. քերականական-թարգմանական մեթոդ /grammar-translation method/:

Ակտիվ ուսուցման մեթոդը համարվում է կարգապահական ոճով դասընթացն անցկացնելու միջոց: Այս մեթոդի առանձնահատկությունն այն է, որ հենց առաջին դասից սովորողի հետ աշխատում են չորս հմտությունները՝ կարդալ, գրել, լսել, խոսել /reading, writing, listening, speaking/ հավասարապես զարգացնելու ուղղությամբ: Այս դեպքում սովորաբար մեկ դասընթացը բաշխում են չորս հավասար ժամաբաժինների՝ յուրաքանչյուրի ընթացքում մեկ հմտության շուրջ աշխատելու համար:

Տվյալ դասընթացի համար նախատեսված բառապաշարի և քերականության շրջանակներում աշխատանք է տարվում չորս հմտությունները զարգացնելու ուղղությամբ: Սովորաբար այս մեթոդի կիրառումը գործնականում հետևյալ կերպ է արտահայտվում. ընտրվում է համապատասխան քերականական նյութ պարու-նակող տեքստ, որը սովորողը կարդում է, թարգմանում, դուրս գրում անձանոթ բառերն ու արտահայտությունները, կատարում այնպիսի վարժություններ կամ

առաջադրանքներ, որոնք ստուգում են բառապաշարի և քերականության յուրացումը և կատարելագործում դրանք, հետո դասավանդողը օտար լեզվով խոսում է այդ տեքստի շուրջ, մեկնաբանություններ անում և նույնը պահանջում սովորողից:

Վերջինս փորձում է հասկանալ խոսքը և խոսելու միջոցով վերարտադրել ստացած գիտելիքները: Այսպիսով, դասընթացի ընթացքում սովորողը և՛ յուրացնում, և՛ կիրառում է նյութը: Հաջորդող դասընթացների ընթացքում հմտությունների շուրջ աշխատելիս դասավանդողը պարբերաբար անդրադառնում է նախորդ դասերի նյութերին, որպեսզի սովորողը լավագույնս մտապահի դրանք:

Հաշվի առնելով ուսումնագիտական ոլորտի և գործատուների պահանջները, կարծում ենք, ակտիվ ուսուցման մեթոդը ամենաարդիականն է, քանի որ մեր օրերում առավել քան կարևորվում է լեզվի ակտիվ՝ տեսական և գործնական իմացությունը:

Երկլեզու մեթոդը նույնպես կարգապահական ոճում կիրառվող մեթոդներից է<sup>6</sup>:

Այս մեթոդի առանձնահատկությունն այն է, որ սովորողը լեզուն սովորում է «թեմատիկ սկզբունքով»՝ կոնկրետ իրավիճակներում ըստ անհրաժեշտության հաղորդակցվելու համար:

Կարելի է ասել, այն հիմնականում ենթադրում է բանավոր խոսքի՝ հաղորդակման ուսուցում: Յուրաքանչյուր դասաժամի համար սովորողը ընտրում է թեմա, նախապես իր մայրենի լեզվով գրառում է բառեր, բառակապակցություններ և արտահայտություններ, կազմում նախադասություններ, ըստ անհրաժեշտության նաև տեքստ: Դասընթացի ժամանակ դասավանդողը թարգմանում է սովորողի ներկայացրած նյութը, բացատրում արտահայտությունների և նախադասությունների կազմության քերականական ու շարադասական սկզբունքները, դրանցում առկա ժամանակաձևերը և այլն:

Նա նաև սովորողի հետ կազմում է հաղորդակցման ժամանակ թեմայի հետ առնչվող հավանական հարցաշար՝ պատասխանների հնարավոր տարբերակներով:

---

<sup>6</sup> Տե՛ս, Ի. Բիմ., К проблеме планируемого результата обучения иностранным языкам в общеобразовательной средней школе, “Иностранные языки в школе”, № 6, 1984, էջ 17-24:

Սովորողը դասավանդողի ներկայությամբ կարողում է օտար լեզվով թարգմանված ամբողջ նյութը, դասավանդողը շտկում է առողջանությունն ու արտասանությունը, հանձնարարում է հաջորդ դասի համար անգիր սովորել այն և պատրաստ լինել այդ թեմայով հաղորդակցվելու:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ մեկ թեմա մշակելիս և թարգմանելիս առնչվում ենք բազում քերականական ձևերի հետ, որոնք մեկ օրում բացատրել և առավել ևս յուրացնել հնարավոր չէ:

Այս դեպքում դասավանդողը, գործի դնելով իր մանկավարժական հմտությունները և հետևելով օտար լեզվի ուսուցման ծրագրային հերթականության սկզբունքներին, յուրաքանչյուր դասընթացին անդրադառնում է քերականական որոշ թեմաների՝ մյուսների բացատրությունը թողնելով հաջորդող դասաժամերին:

Երկլեզու մեթոդը սովորողների մոտ հատկապես զարգացնում է բանավոր թարգմանություն կատարելու հմտությունները, քանի որ ողջ ուսուցման ընթացքում երկու լեզուներն էլ համագոր և հավասարապես «աշխատում են»:

Կարելի է ասել, յուրաքանչյուր թեմայի անդրադառնալիս՝ նախ բախվում ենք մայրենի լեզվով այդ թեմայի շուրջ խոսք կառուցելու և զարգացնելու պահանջին: Կարծում ենք, երկլեզու մեթոդի կիրառումը հարմար չէ լսարանային և խմբակային ուսուցման համար: Այս մեթոդն անհատական մոտեցում է պահանջում, իսկ բազմամարդ միջավայրում քայլերի վերոնշյալ հաջորդականությամբ արդյունավետ աշխատելն զրեթե անհնարին է դառնում կամ դանդաղեցնում է ուսուցման ընթացքը:

Ուղիղ մեթոդը օտար լեզվի ուսուցումը նույնացնում է մայրենի լեզվի հետ: Այս մեթոդի առանձնահատկությունն այն է, որ հիմնական շեշտը դրվում է բանավոր հաղորդակցության վրա:

Այս դեպքում ամբողջությամբ բացակայում է թարգմանությունը (միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում), բառապաշարը դասավանդվում է նկարներով, պատ - կերներով, ժեստերով և արտաքին շարժումներով ցուցադրելու և հասկացնելու միջոցով:

Ինչպես փոքր երեխան է լսելով սովորում խոսել, կարիքի դեպքում բոլոր հնարավոր մեթոդներով հասկացնում իր մտքերը, «ճարահատյալ» հաղորդակցվում, այնպես էլ լեզուն սովորողը, չունենալով թարգմանելու հնարավորություն, սկսում է հնարավորինս կենտրոնացնել ուշադրությունը՝ ճիշտ ընկալելու, իսկ հիշողությունը՝ ընկալածը մտապահելու և վերարտադրելու համար:

Ուղիղ մեթոդի դեպքում օտար լեզուն օգտագործվում է հանպատրաստից՝ իրավիճակի թելադրանքով: Դասավանդողն ու սովորողը ուսուցումը սկսում են կենցաղային թեմաների շուրջ՝ ամենաշատ կիրառվող տարրական բառապաշարով: Մակայն նշումներ կատարելը պայմանավորված է սովորողի հիշելու ունակությամբ: Ցանկալի է անգամ նոր նյութի դեպքում խուսափել գրառումներ կատարելուց, պարզապես հաճախ կրկնելով հիշել: Ուղիղ մեթոդը սովորողի մոտ զարգացնում է ինքնուրույն օտար լեզու սովորելու հմտություններ: Ուսուցման որոշակի փուլում սովորողը ձեռք է բերում նորը հեշտությամբ կռահելու ունակություններ: Մակայն, կարծում ենք, այս մեթոդը բացասական կողմ ունի<sup>7</sup>:

Միայն հաղորդակցվելով սովորելը՝ քերականական շատ ժամանակաձևեր դուրս է թողնում գործածությունից: Սովորողը խոսքը կառուցում է իր համար հեշտ տարբերակով:

Հաղորդակցական մեթոդը, կարելի է ասել, երկլեզու և ուղիղ մեթոդների համադրումն է: Այստեղ նպատակը հաղորդակցական հմտություններ զարգացնել է, ոչ թե լեզվի կառուցվածքային գիտելիքները: Ինչպես երեխան է լսելով և կրկնելով սկսում խոսել՝ առանց հասկանալու քերականական կառուցվածքի առանձնահատկություններն ու նրբությունները, այնպես էլ սովորողն է հիմնականում առանց նշումների, միայն լսելով և խոսելով յուրացնում լեզուն:

Այս մեթոդը երկլեզու մեթոդի հետ շատ ընդհանրություններ և տարբերություններ ունի: Նման է, քանի որ չի արգելում մայրենի լեզվի գործածմամբ ճշտումներ կատարել, անհասկանալին պարզաբանել, սակայն տարբեր է նրանով, որ շեշտը չի

---

<sup>7</sup> Տե՛ս, Օ. Поляков., Автономия учащихся как основа развития современного непрерывного образования личности, “Иностранные языки в школе”, № 3, 2004, էջ 46:

դնում քերականական կառուցվածքների ուսուցման վրա՝ պարզաբանելով, որ դրանք, ուսուցման որոշակի փուլում, ինքնաստիճյան հասկանալի կդառնան սովորողի համար:

Ուղիղ մեթոդի հետ նույնպես ընդհանրություններ կան:

Հաղորդակցական մեթոդը շեշտը դնում է հենց հաղորդակցման վրա, նվազագույնի է հասցնում քերականական բացատրությունները և մայրենի լեզվի կիրառումը, սակայն չի արգելում դրանք: Քերականական-թարգմանական մեթոդը համարվում է «դասախոսակենտրոն» մեթոդ, քանի որ մատուցվող ամբողջ նյութը բացատրելը, թարգմանելը, արտահայտություններ կազմելը և այլն, դասավանդողն է կատարում, իսկ սովորողն աշխատում է մշակված նյութի հետ:

Քերականական-թարգմանական մեթոդի կիրառումը հնարավորություն է տալիս բառապաշարը ուսուցանել ոչ թե մեկ բառ – թարգմանություն սկզբունքով, այլ յուրաքանչյուր բառով կազմված առավել տարածված արտահայտությունների մատուցմամբ:

Այսինքն, դասավանդողը ներկայացնում է բառը՝ կազմելով բառակապակցություններ և արտահայտություններ, իսկ սովորողն աշխատում է լեզվական ձևերի հետ, ինչն էլ «թոթափում է սովորողի բեռը» ուսուցման գործընթացում:

Քերականական-թարգմանական մեթոդի հիմնական առանձնահատկությունն այն է, որ դասավանդման գործընթացում չեն տարանջատվում բառապաշարն ու քերականությունը:

Յուրաքանչյուր նոր բառ ներկայացվում է տարբեր համատեքստերում, այսինքն՝ դասավանդողը ներկայացնում է այդ բառի բառարանային բոլոր իմաստները, դրանով կազմվող բացատրությունները և այլ նրբություններ ունեցող արտահայտությունները: Նախադասությունների մեջ գործածելիս դասավանդողը խոսքն այնպես է կազմում, որ նոր բառը, որպես խոսքի մաս, հանդես գա նախադասության այն բոլոր հնարա - վոր անդամների դերերում, որոնք թույլ է տալիս քերականությունը և սովորողին ներկայացնում է արտահայտությունների և բառակապակցությունների անդամային

դերը նախադասության մեջ: Իսկ եթե նոր բառը բայ է, դրանով նաև կազմվում են սովորողին ծանոթ բոլոր ժամանակաձևերը:

Օտար լեզվի ուսուցման ընթացքում քերականական-թարգմանական մեթոդի կիրառումը սովորողին հնարավորություն է տալիս նախադասություններ կազմելիս իր սովորած «պատրաստի» արտահայտություններն ու բառակապակցություն - ները «տեղադրել» նախադասության մեջ՝ պարզապես իմանալով տվյալ լեզվի շարահասական առանձնահատկությունները՝ նախադասության անդամների գործածման հերթականությունը խոսքում:

Այսինքն, սովորողը յուրացնում և գործածում է «պատրաստի» քերականական ձևերը, ոչ թե առանձին բառերը շարահյուսական համատեքստում:

Դասընթացի ընթացքում գրառումներ կատարելու պատճառով ժամանակ չկորցնելու նպատակով՝ դասավանդողները իրենց մշակած բառապաշարն ու դրանց գործածման հնարավոր տարբերակները գրավոր /թղթային/ տարբերակով ներկայացնում են սովորողին /այդ պահին կամ հաճախ նաև նախորդ դասին/:

Հարկ է նշել, որ այս մեթոդը հիմնական շեշտը դնում է գրավոր խոսքի զարգացման վրա, քանի որ սովորողը ավելի շատ աշխատում է տեսողական պատկերների, քան լսողական հնչյունների հետ:

Գ. Քուրը, ուսուցման երկլեզու մեթոդների մեջ, քերականական-թարգմանական մեթոդը համարում է «հեղափոխական մեթոդ», որն իր բացառիկության շնորհիվ սովորողին հնարավորություն է տալիս մշակումներին ժամանակ տրամադրելու փոխարեն պարզապես սերտել նյութը<sup>8</sup>:

Այս մեթոդը լայնորեն կիրառվում է արագացված դասընթացների ժամանակ: Կարծում ենք, այն հեղափոխական էր հենց այն դեպքերի համար, երբ սովորողը ստիպված է կարճ ժամանակահատվածում սովորել լեզուն կամ զբաղվածության պատճառով չի կարողանում ժամանակ հատկացնել ինքնուրույն աշխատանք կատարելուն:

---

<sup>8</sup> Տե՛ս, Cook G., Translation in Language Teaching. Oxford: Oxford University Press 2010, էջ 10-12:

Լսելով բազմաթիվ մասնագետների կարծիքներ և ինքներս դասավանդելով՝ կարծում ենք, որ որքան էլ մեթոդները մշակվում, թրծվում, հղկվում, լրացվում և կատարելագործվում են ժամանակի և սերունդների հետ, որքան էլ իրենց տեսակի մեջ արդյունավետություն են գրանցում, միևնույն է, յուրաքանչյուր հմուտ մասնագետ ուսուցման ընթացքում կիրառելով որևէ մեթոդ, որոշ տարրեր, նրբություններ և մոտեցումներ «ներմուծում է» նաև այլ մեթոդներից և իր սեփական դասավանդման պրակտիկայից:

## Եզրակացություն

Այսպիսով, հաշվի առնելով դասանյութը և լեզվանյութը, ուսուցման մեթոդներ ու սկզբունքներ ընտրելիս սովորողների ցանկությունները՝ ուսուցիչները և դասընթացը նախագծողները ավելի մեծ հնարավորություն են ստանում մոտեցնել ուսումնա - կան իրադրությունները բնականին, ստեղծել ոչ թե արհեստածին, այլ բնական իրադրություն: Լուրջ խնդիր է նաև պահանջմունքների վերլուծության անցկացման կարգի, ժամանակահատվածի և ընթացակարգի ընտրությունը:

Մեթոդաբանները առաջարկում են անցկացնել այն ամբողջ ուսուցման ընթացքում, նրա տարբեր փուլերում: Այդպիսի մոտեցումը հնարավորություն է ընձեռում ճիշտ գնահատել թե՛ դասընթացը նախագծողների, դասագիրք ստեղծողների, թե՛ գործնական աշխատանք իրականացնող ուսուցիչների աշխատանքը:

Այստեղ կարևոր է հստակորեն ընդգծել, թե անգլերենի մասնագիտական դասընթացը նախագծելիս որ հայեցակետն է առաջնային դիտվում.

1. կողմնորոշված ենք դեպի մասնագիտական լեզուն,
2. կողմնորոշված ենք դեպի հմտությունները,
3. կողմնորոշված ենք դեպի ուսուցումը:

Կասկած չկա, որ մասնագիտական կողմնորոշման, հմտությունների զարգացման և ընդհանրապես ուսումնառության կաղապարները իրար չեն հակասում, այլ լրացնում են մեկը մյուսին: Այսպիսով, անգլերենի ուսուցման դասընթացը կազմակերպելու համար ուսուցման բոլոր փուլերում անհրաժեշտ է իրականացնել սովորողների պահանջմունքների վերլուծություն:

Վերջինս անգլերենի ուսուցման դասընթացը կազմակերպելիս մղվում է առաջին պլան, քանի որ առանց դրա հնարավոր չէ անհատակացնել ոչ մի դասընթաց, դիտարկել այն տարբերակված կամ ամբողջապես:

Այն օգնում է ուսումնամեթոդական գրականություն, թեմաներ ու տեքստեր, համապատասխան մեթոդներ և սկզբունքներ ընտրելիս և կիրառելիս:

Պահանջմունքների վերլուծության հիմնական պահանջներից է ուսումնամեթոդական գրականության մշտական վերանայումը, տարբերակված և անհատականացված մոտեցումների կիրառումը: Սա պիտի հաշվի առնեն ոչ միայն գործնական դասընթաց անցկացնող ուսուցիչները, այլև այն նախագծող, դասագրքաստեղծ և պլանավորող մեթոդաբան-մանկավարժները:

## Օգտագործված գրականության ցանկ

1. Г. Рогова., Методика обучения английскому языку. Учебное пособие для пед. ин-тов и фак. иностранных языков, Л.: 1975
2. И. Бим., К проблеме планируемого результата обучения иностранным языкам в общеобразовательной средней школе, “Иностранные языки в школе”, № 6, 1984
3. О. Поляков., Автономия учащихся как основа развития современного непрерывного образования личности, “Иностранные языки в школе”, № 3, 2004
4. П. Сысоев., Обучение иностранному языку на старшей ступени общего среднего (полного) образования. Профильный уровень, “Иностранные языки в школе”, № 2, 2006
5. Cook G., Translation in Language Teaching. Oxford: Oxford University Press 2010
6. Dorsch M., Second Language Acquisition vs. Second Language Learning. Germany: Grin Verlag 2011
7. Siddiqui M.H., Techniques of Teaching Strategies. New Delhi: APH Publishing 2009

